ԿԱՆԽԱԲԱՆ

ՈՐՈՑ միանգամ ուշ 'ի կուրծս առեալ՝ փոյթ յանձին կալան յիշել զքաղաքն Սուրբ ԵՐՈՒՍԱՂԷՄ, և զմտաւ ածել զորպիսութենէ հանգամանաց նորին, ուշիմ և հասուն խորհրդով 'ի խոյզ և 'ի խնդիր լինել զանազան արկածից և դիպուածոցն, զկրօնականացն ասեմ և զքաղաքականաց, որ եկին հասին 'ի վերայ նորա 'ի պէսպէս դարս և 'ի յոլով ժամանակս, 'ի յոյզս խռովութեան և 'ի վրդովմունս աշխարհի· բանին ասպաքէն առաջի նոցա ասպարէզ լայնածաւալ հոգեւորական եւ մտաւորական գիտութեանց, եւ աստուածային անսպառելի դանձ իմաստութեան, 'ի կիրս մարդեղութեան եւ 'ի խորհուրդս չարչարանաց Փրկչին մերոյ։

Թողեալ մեր 'ի բաց զրազմադարեան ժամանակս եւ զգործս Հրէական ազգին, որոյ մայրաքաղաք եւ տեղի նուիրական եկաց քաղաքն ընտրեալ· իսկ 'ի ծագել Արեգականն արդարութեան յաշխարհին յայնմիկ, 'ի սիռիլ և 'ի ծաւալիլ ճառագայթից Աւետարանին լուսոյ՝ ընդ ոլորտս տիեզերաց քարոզութեամբ Առաքելոց, յաճիլ և 'ի զարգանալ քրիստոնէական Սուրբ հաւատոյ եւ ճշմարիտ կրօնի, առաւելագունի հասին շնորհաց և փառաց պատուոյ վեհավայր տեղիքն Տնօրինականք 'ի ձեռն բարեպաշտ թագաւորաց, իշխանաղուն պայազատաց, և համայն հաւատացելոց։ Զի թէպէտ և բազում անգամ արիութեամբ 'ի դիմի հարաւ բազմաղէտ վշտաց եւ արկածից, արիւնահեղ պատերազմաց, անմեղ սպանութեանց, եւ անթիւ գերութեանց, որովք քարինք շինուածոցն և հող երկրին յոլովիցս ողողեալ ներկան արեամբ ազգի մարդկութեան։ Այլ իրրեւ արի ախոյեան արհամարհեալ զխոչ և զխութ և զհոյլս տառապանաց և նեղչաց, կրկին և վերստին յարուցեալ եկաց յաւերակացն՝ տարեալ զյաղթանակն փառաց, առեալ և զպսակն պարծանաց։